ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/170

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.06.2021թ. թիվ 26/26-1/10295-2021 գրությամբ Մեսրոպ Աղազարյան Վիգենի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 21.06.2021թ. թիվ 1/18-2/38212-2021 գրության հիման վրա, 23.06.2021թ. թիվ 26/26-1/10295-2021 գրությամբ նախաձեռնել է Մեսրոպ Աղազարյան Վիգենի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Մեսրոպ Աղազարյան Վիգենի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Մեսրոպ Աղազարյան Վիգենի Ա/Ձ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մեսրոպ Աղազարյան Վիգենի Ա/Ձ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/170 ընթացակարգի շրջանակներում 06.07.2021թ. ժամը 09:45-ին և 21.07.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.06.2021թ. թիվ 1/18-2/38212-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար խոնավաչափերի ձեռքբերման նպատակով ստեղծված ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/17-Ք ծածկագրով ընթացակարգին հայտ էր ներկայացրել ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ն:

Էլեկտրոնային աճուրդի միջոցով, սույն թվականի հունիսի 18-ի հանձնաժողովի նիստի համաձայն ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ի ներկայացրած հայտում արձանագրվել էր անհամապատասխանություններ և վերջինիս ծանուցվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ի կողմից, սահմանված ժամկետում, շտկված փաստաթղթերը էլեկտրոնային աճուրդ համակարգում կցվել են, սակայն Դիմում-Հայտարարություն փաստաթղթից բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 42-րդ կետը, սույն թվականի մայիսի 14-ի հանձնաժողովի նիստի հա-մաձայն ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ ԱՁ «Մեսրոպ Աղազարյան Վիգենի»-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/170 ընթացակարգի շրջանակներում 06.07.2021թ. ժամը 09:45-ին և 21.07.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/170 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/170 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/17-Ք» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Մեսրոպ Աղազարյան Վիգենի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի ներկայացված հայտում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագիրը հստակ նկարագրված չէ: Մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում առկա է՝ «պետք է լինի տերմինը», որը առաջարկվող կոնկրետ ապրանքի նկարագրություն չի կարող լինել: Մասնակցի տեխնիկական բնութագիրը շտկման կարիք ունի: Ինչպես նաև Դիմում-հայտարարության մեջ ռուսերեն լեզվով անվանումը գրված է հայերեն: Առաջարկվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը Կարգի 42-րդ կետի հիմքով մերժել է Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի կողմից որպես շտկում ներկայացված Դիմում-հայտարարություն փաստաթղթից բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 23.06.2021թ. թիվ 26/26-1/10295-2021 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 21.06.2021թ. թիվ 1/18-2/38212-2021 գրությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ

կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝ գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:***

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ ***Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում***, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից...:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից հայտարարվել է «ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/17-Ք» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Մեսրոպ Աղազարյան Վիգենի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագիրը հստակ նկարագրված չէ: Մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում առկա է՝ «պետք է լինի տերմինը», որը առաջարկվող կոնկրետ ապրանքի նկարագրություն չի կարող լինել: Մասնակցի տեխնիկական բնութագիրը շտկման կարիք ունի: Ինչպես նաև Դիմում-հայտարարության մեջ ռուսերեն լեզվով անվանումը գրված է հայերեն: Առաջարկվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.06.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը Կարգի 42-րդ կետի հիմքով մերժել է Մասնակցի հայտը, այն հիմնավորմամբ, որ Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենի կողմից որպես շտկում ներկայացված Դիմում-հայտարարություն փաստաթղթից բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Մասնակցին ծանուցվել էր նաև շտկելու հայտով ներկայացված Հավելված 1-ի՝ դիմում-հայտարարության մեջ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված հետևյալ անհամապատասխանությունը՝ «Դիմում-հայտարարության մեջ ռուսերեն լեզվով անվանումը գրված է հայերեն»:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որպես անհամապատասխանություն արձանագրված վերը նշված անհամապատասխանությանը՝ հարկ եմ համարում արձանագրել, որ ինչպես ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ, այնպես էլ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված են մասնակցի կողմից գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով Հավելված 1-ով՝ դիմում-հայտարարությամբ ներկայացվող տեղեկությունների մասին տվյալները, որոնք են՝ էլեկտրոնային փոստի

հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, այսինքն՝ վերը նշված կարգավորումներով սահմանված չէ պարտադիր պայման, որ մասնակիցը Հավելված 1-ով՝ դիմում-հայտարարությամբ պետք է նշի իր անվանումը ռուսերեն լեզվով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ը՝ դիմում-հայտարարությունը՝ արձանագրում եմ, որ այն պարունակում է Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված տեղեկությունները:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված տվյալ անհամապատասխանության՝ Մասնակցի կողմից չշտկելը հիմք չէ վերջինիս նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվության կիրառման համար, որն էլ կհանգեցնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 23.06.2021թ. թիվ 26/26-1/10295-2021 գրությամբ Ա/Ձ Մեսրոպ Աղազարյան Վիգենին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**